

ՔՆԱԲԱՆԱԿԱՆ

ԸՆԴԾՈՎԵԱՅ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ԱՐԳՈՆԱՒԸ (L'ARGONAUTE)

ՊՆՈՎԱՑԻՆ շինողութիւնը գրեթէ իրեն վերջին կատարելութեան հասած է՝ տեսակ տեսակ և հրէշային նաւերու արտադրութեամբը. բայց այժմ կարծես պէտք մը կը զգայ, վիթխարին՝ զաճաճող տապալելու. որով հիմայ կ'աշխատուի ծովու տակէն յառաջացող նաւերու գիւտեր ընել և այս բանին համար աշխարհին ամեն տէրութեանց պատերազմական ծովային զինուորութիւնը՝ ամենայն ճգամբ կը զբաղին:

Մինչև հիմայ եղածներուն մէջ նշանաւոր է՝ Պ. Սիմոն Լաքի «Արգոնաւ» անուանեալ նաւը որոյ մասին հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները կը հաղորդենք՝ Revue des Revues-է օգտուելով:

Հնարագէտ Պ. Սիմոն Լաքը ինքնին բացարեւիժ իւր «Argonaute» գործիքին էութիւնը կ'ըսէ. կանոնաւոր ընկզմում մը ստանալու համար, նախ պէտք է որ ջրասուզակ նաւը կատարելապէս հաւասարակշիռ ըլլայ ջրոյ հետ. այսինքն, պէտք է անոր ընդունարանները ծանրաբեռնել այնչափ որ՝ կարենայ ունենալ իրեն տեղափոխած ջրոյ քանականութեան հաւասար ծանրութիւն մը, և որով կարող կ'ըլլայ ջրոյ մէջ ձուկի մը պէս շարժիլ. Դիաֆանտար, նաև մը ջրոյ վրայ եղած միջոց ուղղելը գծուարին ըլլալով, զիս աւելի գծուարին բան է զայն կառավարել իրեն սուզուելու պարագային մէջ. Եւ յիշատի երբ այս նորագիտ նաւը ջրոյ վրայ գտնուի՝ իրեն ընթացքը միայն ալէն ձախ և ձախէն ալ կրնայ փոփոխել, և միշտ կը մնայ մի և նոյն հորիզոնական մակարդակին մէջ:

Բայց ընդհակառակն երբ չափաւոր խ-

րութեան մը հասնի, այն ատեն առանց վտանգի կրնայ շարժումները ընել աջ կամ ձախ, վեր կամ վար: Ոչ միայն ղեկի ազդեցութիւնը, այլ նաև պարզ նաւաստիի մը՝ առաջ կամ ետեւ տեղափոխելը՝ կարող է նախն բռնած ուղղութեան վրայ մեծապէս ազդեցութիւն ընել: Այս պահազան խորհրդածութիւններէն առաջ եկաւ Արգոնաւի մուղիչ ծրագիրը:

Նաւու իրանը երեք անիւներու վրայ հեցած է, մին ետեւի կողմը որ իւր ղեկ կը ծառայէ: Միւս երկուքը առաջակողմը կը գտնուին և ճիշտ կառքի մը անիւներու պաշտօնը կը վարեն: Երկու ծանրոցներ ալ կան՝ իւրաքանչիւրը 450 հազարպարամիտ՝ որոնք իւր խարխիս կը զործածուին, և մալուխեւ, ըով կապուած ըլլալով՝ նաւու մէջէն մեքենականութեան մը շնորհիւ՝ ըստ կամս վեր կ'անընդունին կամ վար կը ձգուին: Մասնաւոր բնութնաբաններ սահմանուած են նաւու մէջ ծովու ջուր ընդունելու համար, որ կը ծառայէ իւր նաւախիճ:

Վերապէս, առաջակողմը մասնաւոր սենեակ մ'ալ կայ լուսավորի պատկանող և փիլ յետոյ պոսի տեսնենք այս զարմանալի մեքենային գործելու փորձը:

Մեզ կը մնայ ըսել որ՝ Արգոնաւը պարզ տեսականութենէ երկրով զործականութեան աստիճանին հասած է: Անցեալ տարւոյն հոկտեմբեր 12ին Պ. Ս. Լաք իւր հնարած նաւուն մէջ տարաւ զՊ. Ռէյ Սթէյնար Պէրըր, որուն՝ հետեւեալ տեղեկութիւնները շատ հետաքրքրական են:

Պ. Լաք ղեկը ձեռք անելով, նաւը սկսաւ լողալ ծովու մակերեսութիւն վրայ՝ ժամուան մը մէջ գրեթէ հինգ մղոն կտրելու տրագութեամբ: Կամաց կամաց ջուրէն վեր ելած մասը յետին աստիճանի նուազեցաւ: Այժմ տափարակ տեղը հազիւ բանի մը հարիւր ուղղամեղ բարձր է այլքներէն՝ որոնք կ'ողողեն զայն. այլ եւս սուզուիլ տկսելու վրայ է:

— Կեդրոնին սենեակները բացէք, կը հրամայէ Պ. Լաք: Արգոնաւը զանգազութեամբ կ'ընկնի ջրոյ մէջ: Թէպէտեւ այս նաւուն տարածութիւնը շատ պզտիկ է, բայց արտաքայ կարգի հաստատուն շինուած է,

այնպէս որ կարող է ջրոյ զարհուրելի ճնշու-
ղութեան մ'ալ դիմանալ՝ երբ ծովու յատակն
իջնէ։ Սա 36 ոտք երկայնութիւն ունի, իրեն
տաշտը պողպատի տախտակներով կազմուած
է և 100 ոտք խոր ջրոյ ճնշողութեան դի-
մանալու կարողութիւն ունի. բայց այժմ
բնաւ 50 ոտքէ աւելի վար չեն իջեցընել։

Այս միջոցիս նաւուն շտեմարանները կա-
մաց կամաց ջրով լեցուած են։ Մուտքի դռնա-
կը գոցուած է, անոր պտտատակաւոր դամբը
ամենայն զգուշութեամբ հաստատուած են։
Արգոնաքը երթալով դեռ աւելի կ'ընկզմի։
Պ. Սիմոն Լաք՝ կը բացատրէ որ իրեն նաւը
բուն՝ բնդովեայ չէ միայն, վասն զի, թէ-
պէտեւ ջրոյ երեսը
է ջրերին մէջ կը
լողայ, բայց նաեւ
սահմանուած է
ստէպ ծովու յա-
տակը հանգչելու
իւր անիւներուն վը-
րայ։ Եւ յիրաւի
սա աւելի ծովային
(motosycle) շալ-
ժանիւս. մ'է, քան
թէ նաւ։

— Այժմ, շա-
րունակեց Պ. Լաք,
վար իջնանք։

— Վար իջնա-
լով՝ երկայն և նեղ
սենեկի մը մէջ գրաւ.

նուեցանք՝ որ աղօտ կերպով լուսաւորուած
էր՝ կանաչ դեղինորակ լուսով մը։ Առաջա-
կողմը Վիլսոնի կապարային (gazoline) մե-
քենայով և ելեքտրական մեքենաշարժով գրա-
ւուած էր, և մեր դիմաց կը տեսնէինք լու-
սորդի խուցին պողպատեայ ծանր դռները։

— Զուրի մէջ թաթխուած ենք, ըսաւ
Պ. Լաք։

Պզտի աշտարակին սանդուխէն վեր ելայ
և ապակեայ թիթեղէն դուռն նայեցայ։ Աչ-
քերս ճիշդ ջրոյ մակերեսութիւն հաւասար
էր։ Ալեաց միջոցնմբու մէջէն, կը յաջողէի
վայելեանական կերպով տեսնել Նոր-Ժերսէյի
արեւալոյս ափունքները և աստ անգ ոտքը


որսացողաց նաւակներուն ճերմակ առա-
գաստները։ Քիչ յետոյ ալիքները բոլորովին
նաւուն վրայէն կ'անցնէին։

Հիմա, բոլորովին ջրոյ տակ ենք և Ա-
լեաց բաղնիքու ձայնը զարդեցաւ։ Աշակող-
մեան՝ ապակիով գոցուած ծակէն նայեցայ,
ջուրը աչքերէս բթաշափ մը հեռու է և հա-
զարաւոր ծովամայրեր կը տեսնեմ որոնք
կէս թափանցիկ են և տարօրինակ ձեւերով,
Զկանց տէրութեան մէջն ենք, Նաւու խորը
վերադարձայ՝ որ ելեքտրական փառաւոր լու-
սով լուսաւորուած էր։ Սկսայ ականջներուս
սաստիկ ցաւ մը զգալ՝ օդոյ ճնշականութեան
շատնալուն պատճառաւ։ Նոյն միջոցին հա-

ղորդակցութեան
խողովակին հովին
հոսանքը աւելի
զգալի եղաւ։ Պ.
Լաք, այն ատեն
հայելի մը կախեց
պզտի աշտարակին
խորը՝ գրեթէ 450
ոնեցող անիւնան
մը տակ և զեկին
անիւր ձեռք տաւ։
Այն հայելիին մէջ
նայելով, կը տես-
նէր կողմնացոյցը
որ յիշեալ աշտա-
րակին ամենավերի
կողմը զետեղուած
էր. «Չենք կրնար

կողմնացոյցը աւելի վար դնել, ըսաւ. հոս
շատ մեքենայ և պողպատե կանաչ։ Եւ բա-
ցատեց որ փորձը իրեն ապացուցեց թէ
կողմնացոյցը ջրոյ մէջ շատ աւելի ճշտու-
թեամբ կը կատարէ իր պաշտօնը, քան ջրոյ
վրայ։

Աշխարհացոյցը բերին։ Այժմ ուղղակի
Սանտի-Հոսք և զէպ ի բաց ծով կը ճանա-
պարհորենք, բայց դեռ յատակը չհասնաւ։
Այն ատեն կափարիչները բացին և ընդու-
նարաններու մէջ դեռ ջուր լեցուցին։ Դուրսի
ջուրը աւելի խիտ և աւելի դեղին է և այլ
եւս չեմ կրնար փոքրիկ կայմէն անդին և
զամները տեսնել՝ որ Արգոնաքէն վրայ ցոլաւ։



Արգոնաքը ուղղահայեաց կերպով նեղքուած։

1. Մեքենավար և զինաւոր մեքենայը։ - 2. Զարհուր-
նիքու մեքենայը։ - 3. Առաջակողմեան անիւ։ - 4. Սենեակի
կապի։ - 5. Եւսեի անիւ։ - 6. 6. Կեղտոնի սենեակներ։ -
7. Առանձին սենեակ։ - 8. Լուսորդի սենեակ։ - 9. Նաւու
առաջակողմը և երկու ապակեայ պտտուածները։ - 10. 10.
Բեռնաբանք ծովային ջրոյ։ - 11. Մուտքի դռնակ։ - 12.
Աշտարակի։ - 13. 14. Գէկ և ուղղիչ։ - 15. Ժամկ։

կայմի տեղ կը ծառայէ։ Պատուհանիներէն ձկնէր կը տեսնուին որոնք կարծես կը կենան, բայց յանկարծ պզտի շարժումէ մը կը կորսուին։

Նաւուն պողոպտառայ պատէն կախուած է հեռակսոս մը որ սահմանուած է՝ նաւու մէկ ծայրէն միւս ծայրը հաղորդակցութիւն բնելու համար՝ երբ լուղորդին սննեակը բաց է և որ հետեւաբար, ամէն հաղորդակցութիւն կորուած կ'ըլլայ առաջակողման հետ։ Այս միջոցիս պզտի ցնցում մը ազդեց մեզ թէ ծովու յատակը նոստանք։

— Երբ այս յատակը շատ աղմուտ է, բոստ մեզ Պ. Լաք, այն ատեն զմեզ շուտով անկէ ազատելու կը փութանք՝ որպէս զի նաւին անիւները աղմուկ չծանրարեանին։ Ազատելու համար մեր ծանրութիւնը կը պահեսցնենք՝ ջրհաններու օգնութեամբ դուրս մղելով պահարաններուն ջրոյ մէկ մասը։ Ասով մեր ուղածին համեմատ՝ կ'ունենանք տեղաշարժի կամ փետուրի մը թթիւութիւն։ Երբ երկիրը լաւ է, ապառն կամ թնտառուն աւագ, այն ատեն մեր անիւններով առաջ կ'երթանք, բայց այդպիսի աղմուտ երկրի մը մէջ, կը գործածենք մեր մղիչը։

Ահաւասիկ, այժմ Սանտի—Տօքի ծովախորոց վրայ ամենայն յաշտութեամբ կը վազենք՝ այնպէս որ կարծես թէ Պրօտոէյի մէջ կառողով շրջապայութիւն կ'ընենք։ Մեր դիմացը՝ պատին վրայ ցուցակներ զետեղուած են որոնք որոշակի կը նշանակեն, մեր ընդօժիւնայ կենաց ամէն զէպքերը։ Մին նաւուն կեդրոնական սենեկին օդոյ ճնշողութեան աստիճանը կը ցուցնէ, ուրիշ մը օդոյ պահասելուն չափը կը ցուցակէ, և երբ երկուքն ալ զէրո աստիճանին վրայ զան, այն ատեն կը հասկնանք որ օդոյ ճնշողութիւնը՝ սենեկին մէջ՝ կանոնաւոր է, այսինքն թէ մակերեւութի օդոյ աստիճանին հաւասար է։ Ահաւասիկ անուաղայն մը, որ հնձեղանիսի շատ կը նմանի՝ և որ մեզ կը ցուցնէ թէ՛ իրքան արագութեամբ կ'ընթանայ նաւը իրեն անիւներուն միջոցաւ։ Հակաման կարծածքի մը երկայն պաքը կը ցուցնէ մեզ թէ արգեօք կ'իջնենք թէ կ'ենենք՝ ջրոյ մէջ։ Թանկարծ աստիճի բազիւնին մը զգացնէ, նաւը բար-

ձրացաւ և ապա իսկոյն իւր առաջուան հանգարտ ընթացքն առաւ։ Ժայռի մը հանդիպած էինք և անոր վրայէն ամենայն դիւրութեամբ ոստին մ'ըրած էինք։

Այս առթիւ ծանուցանենք թէ՛ Պ. Լաք անձնական փորձովը այս եզակիս իրականութիւնը տեսաւ որ՝ գրեթէ ծովու ամէն ճամբաները նոյն ուղղութեան վրայ են, որ և այս շատ մեծ կարեւորութիւն ունի Արգոնաթի պէս կառքի մը համար։ Սխալ է հաւատալ թէ Ուիլիամսոյ յատակը լի է մեծամեծ լեռանց շղթաներով կամ հովիտներով։ Զիչը է որ, այլեւայլ ծովափանց էջեր շատ զտեղիւյր է՝ ուրիշներէն. բայց ընդհանուր կերպով կրնայ բուսել որ Ալպանտեանի յատակը միահարթ է։ Սակայն Արգոնաթ միշտ ծովու յատակէն առաջ կ'երթար և նոյն ատեն 30 ոտք հաստ ջրոյ տակ ըլլալով բնաւ դժուարութիւն չէր բաշեր յառաջելու։ Պ. Լաք հրամայեց կեցնել մեքենան։ Զօրութեանական մեքենայից զդրդուն յանկարծակի զարգեցաւ, երեքորական լոյսներ մարեցան, և ամենայն ինչ խոր լուսութեան և մթութեան մէջ թաղուեցաւ։ Զաւապահորդք օստտիկ երկիւղի մէջ էին, բայց վախերնին երկայն շտեւեց։ Լապտեր մը վառուեցաւ, յետոյ երկրորդ մը, յետոյ երրորդ մը, մինչև որ նաւը առաջուքն էր աւելի լուսաւորեցաւ։ Եւ յիշուի, Արգոնաթ իրեն շարժիչին գործելուն միջոց՝ զօրութեանական մեքենայից ծնուցած երեքորականութենէ զատ, կազի բաւական պաշար մ'ալ կը պահէ ի հարկին ժամերով լուսաւորելու համար։ Այս միջոցիս մասնաւոր ընդունաւորաններու մէջ պահուած երկու օրուան համար բաւելիք ճնշելու օդոյ մէկ մասը լեցուեցաւ սենեկին մէջ։ Պ. Լաքի հիւրերը զայն ներշնչելով՝ միխթարուեցան։

— Սակայն, բոստ մէջերնէն մէկը, եթէ շարժիչ մեքենայէն բան մը արուելու ըլլայ՝ այնպէս որ չկարենաք՝ իրը նաւախին ընդունած ջուրը դուրս մղել, Բնչ պիտի ընէք այն ատեն։

— Չեռնաշարժ ջրհաններ ունինք, բոստ Պ. Լաք, որոնց շնորհիւ՝ բիշ մը ուշ՝ մեր նպատակին կը հասնինք։

— Բայց եթէ, ջրհաններն ալ գործելէ
զադրէին:

— Այն ատեն, բաւական է դպիլ այս
լծակին՝ մեր ողնափայտը քակելու համար
որ 2.000 հազարապրամ ծանրութիւն ունի,
և մենք արուեստական ուսմբի մը պէս ջրոյ
մակերեւոյթը կը ցատկենք:

Յիրաւի նախազգուշութիւնը ինչ մանրա-
մասնութեան մդեր է հանճարեղ հնարագէտը՝
որ կազաջրային շարժիչ սկոնայ մինչեւ ձեռ-
նաշարժ ջրհանը՝ ժամացոյցի մեքենականու-
թեան մը նման՝ կատարելապէս կանոնա-
ւորեր է: Ճանապարհորդք նաւուն մէջ ու-
նէին՝ պտրտելու, շարժելու, ուտելու, քնանա-
լու տեղ: Կրցան ծովու յատակը տաք սուրճ
խմել՝ առաջին անգամ ըլլալով: Պ. Լաք
այս ժամանակէն պատուելով՝ պատմեց թէ ինչ-
պէս այս ընդծովեայ նաւուն առաջին գաղա-
փարը միացըր եկաւ: 10 տարեկան եղած մի-
ջօրը դիպումածով մը կտրողացեր է ժիւի Վէրնի
նշանակուր՝ Քսաւե հազար մղոն ծովփրոշ տակ՝
մակագրեալ հատորը: Այն ատենէն սկսեալ՝
քնաւ չէր դադրած ընդծովեայ նաւու մը շի-
նութեան վրայ մտածելէ՝ որ կարող ըլլար
Nautilus-ի երեւակայական քաջութիւնները
իրականապէս գործադրել: 1894ին սկսաւ
շինել Արգոնաւը, բայց ոչ թէ այս՝ որ հիմայ
կը գործածէ այլ ուրիշ ասոր փոքրիկ տի-
պարը, զոր արտօնագրել տուաւ, և որ իւր
էութեան մէջ կը բոլմանդակէր՝ այն ամէն
իրականացած գիւտերը՝ զոր տեսանք մե-
ծագոյն օրինակին՝ այժմեան Արգոնաւէի մէջ:
Իւր առաջարկած նպատակը ծովու տակ
շրջագայութիւն ընելէ աւելի՝ այն տեղ լու-
դորդներու անկարելի եղած գործերը իր գոր-
ծերով տեսնելը եղած է. օրինակի համար՝
նաւաբեկութեամբ ընկղմած գանձերը փրն-
տել. նաւարկութեան փնտաակար՝ քարա-
ժայռները խորտակել, ընդծովեայ հանքերը և
սուզանաւերը գտնել, կամ նորոգել հեռա-
գրական պարանները, և այլն, և այլն:

Պէտք է գիտնալ որ այս այլեւայլ պէտ-
քերը լուրդորդի մը միջոցաւ կը հոգացուի,
որն որ իրեն պաշտօնին վերաբերեալ զգեստ-
ներով կ'ըլլայ: Բայց նաւուն մօտիկ ըլլալը՝
որ իրեն շնչելի օդ կը հայթհայթէ և վտանգի

միջոց իրեն ապատանարանը կ'ըլլայ՝ իւր
աշխատութիւնը շատ կը դիւրացընէ: Մինչեւ
հիմայ լուրդորդի մը ասաձգական խիժէ խո-
ղովակը՝ որ իրեն շնչելի օդ կը բերէր, ա-
պահովութեան չուանը որ զինքը իրեն վար
իջած նաւակին հետ կը միացընէր, երբեմն
այնքան երկայն կ'ըլլային որ ասոնք փոխա-
նակ նպատակելու շատ անգամ՝ վտանգներու
պատճառ կ'ըլլային: Լուրդորդ՝ իր կազմած
ներուն խառնակելու միտնէ՝ կը գուշանար
ընկղմած նաւերուն և իրերուն խորը մտնե-
լէ, այլ միայն իրեն դիւրին երեւցած գոր-
ծերը կը տեսնէր: Այժմ դիւրաւ կը հասկցուի
որ այս մասամբ Պ. Լաքի գիւտը ինչ աս-
տիճանի կարեւորութիւն ունի: — Համա-
ռօտիւ զննենք լուրդորդի սենեկին գործելու
եղանակը:

Այս սենեակը բոլորովին պողպատէ թի-
թեղներով շինուած ըլլալով՝ Արգոնաւէի ա-
ռաջնակողմը դետեկուած է: Հաղիւ թէ այ-
ցելոդը հոն մտան, Պ. Սիմոն Լաք՝ յետ
խնամքով իրենց մտած դուռը վերագոցե-
լու և պտտեակները դարձնելու, ծորակ մը
բացաւ ուսկից օդը ուժգին յորդովեանմբ
սենեկին մէջ լեցուեցաւ: Կարծես թէ ամենքս
ալ ականջնուս մէջ մէյմէկ սաստիկ զարնող
թմբկահարներ ունէինք: Ճշնշումը երթալով
կ'աճէր և նոյն իսկ անտանելի կ'ըլլար և
ճնշման ցուցակին ստեղծ միշտ կը բարձրա-
նար՝ մինչեւ հասաւ այն կէտին որ ցուցուց
թէ ներքին օդոյ ճնշումը հաւասար էր ար-
տաքին ջրոյ ճնշման: Այն ատեն Պ. Լաք
բացաւ պտտեակներով հաստատուած՝ նաւու
յատակը՝ եղող՝ դռնակ մը և կրցանք տեսնել
շուրը և ծովու տղմուտ յատակը: Զուրը
հոն էր, և նաւուն մէջ չէր մտնիր, որով՝
հետեւ օդոյ ճնշողութիւնը զայն կը մշէր:
Պ. Լաք սեւակ մը ակիշ (gaffe) ձեռքը
առաւ՝ որ ճանկով մը կը վերջանար:

— Տեսէ՛ք, ըսաւ, ինչ դիւրին պիտի
ըլլայ հեռագրական պարան մը բռնելը և
կտրելը:

Յիրաւի անկէ աւելի պարզ բան չէր կրնար
ըլլալ: Եթէ Սիմոնն ծովակային ամբիւ-
կական նաւատորմիդ Սանթիակոյի գիմաց
Արգոնաւէի նման նաւ մը ունենար՝ սպանիա-

կան ընդո՞ւլեայ ականները կէս օրուան մը մէջ բոլանդակապէս պիտի կարողանար շնչել, Միւս կողմանէ, Արգոնաւը կարող պիտի ըլլար ամենայն դերուլծեամբ տանել լու տուգանաւեր Սէրվէրա ծովակալին նաւերուն ջով՝ որոնք նաւահանգստի մէջ խարխախին նետած էին, հետեւաբար շատ շուտով օգ պիտի հանէին զանոնք, և աներկիւզ պիտի մնային պայծման հետեւանքներուն վրայ չմտածելով:

Սակայն, Պ. Սիմոն Լաք իր ձեռք դարկած փորձը լինցուցած էր: Արգոնաւը աշխուժիւ ծովու երեսը կ'ելլէր, և հրաժեշտի ողջոյն կու տար այն անդնդոց, որոնք մէջ 3 ժամէ աւելի սուզուած էր: Երբ իր աշտաբակիկը շուրջ գոլար կ'ելլէր մեծ փրփուրներ ժայթքեցնելով, ճանապարհորդը տեսան իրենցմէ, գրեթէ 100 մեզր հետո՝ արագութեամբ գէպ ի նիւ—ծօրք յառաջացող խորոհ նաւ մը: Նաւատարները առագաստաւ կաշեհրու վրայ ելած էին և հետաքրքրուածեամբ կը դիտէին մեր տարօրինակ նաւը, անտարակոյս իրարու հարցնելով ի՞նչ էր այն ծովային հրէշը, որ մակերեսով կ'ելլէր օգ շնչելու համար:

Թորգմ. Հ. Ն. ՏԻՐԱՅՈՒՆԻԱՆ



ԳԱՂՂ. ԱՌԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ

ՄԵԻՆԼԼԻ ԲԵՐԻՏՏՈՒ

ԿԱՐԱՊԸ

Խոր ու խաղաղ լիճերու հայելոյմ տակ, ամփրդով, զամէ կարապմ ալիքներմ իրեմ լայնշի թաթերով, ու կը սածի: Արուաբոյս փետուրք իրեմ կողերու Նըմամ եմ ձեռնց ապրիլի որ կը փըլնի արեւուծ. Բայց, կը վարէ զեփուռէ թըրթուռով՝ կայմով (մ' ըսպիտակ, զիմքմ իր մեծկակ ուժից թիւ իմչպէս դամդաղ մի (մաւակ: Եղեգմերէմ վեր ձեռն իւր պարամոց զեղապամեմ,

Մըլըրծէ զայմ, Ժուռ բերէ, շըրերուս վրայ երկըմցած. (կըմցած. Կը ծըռէ զայմ շըրերալից՝ զերդ կիսաղէմք մ' (կակմթի, Եւ ծածկէ իւր սեւ կըտուցմ ի մէջ վըրիմ արծաթի: Ամդորուլծեամ ու շուքի կայամ՝ սոճեաց եզերքէմ՝ Մերթ օծապտոյտ կը մազի, ու թաւ խոտոց մէջ (տեղէմ Ջոր մազի պէս կը քաշէ ծըզած իրեմ ետեւէմ Մաթի կ'երթայ մըւադկոտ թոյլ զըմացքով մ' յամ. (քօրէմ. Ջարամծամերմ՝ ուր մըտիկ կ'ըմէ քերթողմ ըզզագ. (մամ, Եւ աղբերակմ որ կու յայ միշտ սիրելիմ քացակամ չաճելի եմ իրեմ. հոճ յածի, ուսույ տերեւակ մ' իմկած լըռիկ՝ քըտուի իւր պայծառ ուսիմ կաթ. (մորակ: Մերթ կը սուրճայ դէպ ի խորմ, ու հիւռու մոթ (ստտառէմ Դէպ ի կապոյտմ՝ հեզամաճ՝ դարձմելով դիվմ իրեմ, Ըմտրէ մայի, սոմելու համար զիւր փայլ պաղ. (պաջուսմ Ակմախըտիդ վայրիկմ ուր ցուլմ ճանաչը արեւուծ: Յետոյ, շըրեմ ափումըմեր երբ չիմ այլ եւլու ճամօթ, Այմ պահուսմ երբ ամէմ ձեւ ըստուիթ թըլի խառ. (մաշփոթ, Եւ զթուի կամարմ ակօսէ գիծ մը կարմիւս ու եր. (կայմ, Երբոր և ոչ մի կըմիւմ չի շարժիր, ոչ մի շուշամ, Երբ պարզ օդիմ մէջ գորտերմ համեմ աղմուկ ու (շառաչ, Եւ ճանաչէ կայծոռիկ ի լուսմակիմ շիջք պաղպաջ, Թըրչումը՝ մուլթ լըմիմ մէջ՝ ուր իր մերքեւ կը ցուլմ դաթի ու կապոյտ, գեղմ ու փայլ լուսապայծառ (գիշերուսմ, Իրբիւ ամսմ մ' արծաթի՝ աղամամդից մէջ զըրուած, Երկու երկմից մէջ մըմջէ՝ գլուխը թիւիմ տակմ առած:

ՇԵԱՐԱՐԵՐ

ՍիրնՄ այրերմ ես ուր լամբար Արիմոտէ զթամձըր խուար, Իւր արծազամձ՝ մի զոյգըմ միչ ԸՅԷ հառաչ մը մեծ՝ քիչ քիչ:

Շըթարարերմ իրարու քով պարուիմ քարցած արցումըմերով, Որոց՝ շիթ շիթ, խոճաւութիւն դաթի յուշիկ իմ ոտքերուսմ:

Դեմ կը թըլի թէ այս մուլիմ իշխէ ամդորըր ցաւազեմ. Եւ այս երկայմ տիւրը արտառուց չամդէպ՝ որ եմ միշտ կախ ու թաց,